№ 175 ՇԱԲԱԹ 10 ՕԳՈՍՏՈՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 10 ՕԳՈՍՏՈՍԻ № 175

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 կոպ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԱՅՈՎ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակատրոշմ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. տուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏՏԻՆԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ —20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Պոստոյթով դուրս գնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարությունները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնայում՝ Большая 32, Ռիգայում՝ 8 Площадь Биржи.

1913 թվի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, օրինաւոր կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կիրը», 2) «Մշակի» քառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒՄ ԵՆՔ

Շնորհաւորում ենք կրթական տաճարի համակրելի յօբելեանը, որը այսօր տօնվում է Շուշի քաղաքում թեմական դպրոցի 75-ամեակի տօնակատարութեան առիթով:

Շուշու դպրոցը հիմնվեց մի այնպիսի ժամանակ, երբ կրթական հաստատութիւնների թիւը շատ սակաւ էր մեր երկրում և երբ մեր երկիրը պատմական ծանր օրերից յետոյ նոր-նոր ոտք էր դնում կուլտուրական իր զարգացման ճանապարհի վրա:

Այդ դպրոցը հաստատվեց համեստ ծրագրով, որը ժամանակի ընթացքում ընդարձակվեց և ստացաւ իր ներկայ կազմակերպութիւնը, իբրև մեր թեմական դպրոցներից մէկը:

Չը նայելով իր համեստ սկզբնաւորութեան, նա հանդիսացաւ իբրև մի լուսատու ճրագ Արցախի, Սիւնիքի և Աղուանքի հայ ազգաբնակութեան համար, գրաւելով դէպի ուսում երկրի մատաղ սերունդը և պատրաստելով հող աւելի ընդարձակ մտաւոր և հասարակական պահանջների համար տեղական հայութեան մէջ:

Ներկայ յօբելեանը այն համակրելի տօնակատարութիւններից մէկն է, որը կարող է ունենալ կուլտուրական զարգացման հողի վրա թեւակոխած ժողովուրդը:

Տօն կրթական գործի յարատեւութեան համար, տօն մատաղ սերնդի լուսաւորութեան տաճարի հիմնադրութեան առիթով:

Համակրելի և ոգեւորիչ տօներից մէկը մեր անվախթար իրականութեան մէջ:

Շուշու թեմական դպրոցը իր յօբելեանով ապացոյց է այն բանի, որ լուսաւորութեան տաճարը դարձել է պահանջ հայ ժողովրդի համար. բայց միևնոյն ժամանակ նա գնում է մեր հասարակութեան առաջ հոգատարութեան պահանջ, որպէսզի դպրոցը ընդունակ հանդիսանայ բաւարարութիւն տալու այն նոր ընդարձակ պահանջներին, որ ունի ներկայ ուսումնատենչ սերունդը:

Յօբելեանի առիթով ժողովված և ժողովվելի նիւթական նպաստը, որ պատկանելի մի ֆօնդի հիմք է դնում, տալիս է մեզ յոյս, որ Շուշու թեմական դպրոցը պէտք է միջոցներ ունենայ իրագործելու աւելի լուրջ կրթական ծրագիր և գործ, քան մինչև այժմ նա ունեցել է:

«Մշակ» լրագիրը, որ ողջունել է մեր երկրի կուլտուրական սկզբնաւորութիւնները, որ իր ոյժերի չափ նպաստել է կուլտուրական և հասարակական հիմնարկութիւններին լաւագոյն կերպով կատարելու իրանց վերապահված դերը, որ արձանագրել է իր էջերում Ղարաբաղի հայութեան ցաւերը, վշտերը և ուրախութիւնները, այսօր ջերմագին շնորհաւորում է թեմական դպրոցի 75-ամեայ յօբելեանը և վստահ է, որ նա կը հանդիսանայ իբրև կրթութեան մի արգասաւոր սերմարան հայ ժողովրդի մի ստուար զանգուածի համար:

Ա. Քալանթար

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԵԾ ՏՕՆԸ

Այսօր և վաղը կուլտուրական մեծ տօն է Ղարաբաղի հայութեան համար:

Այսօր և վաղը Շուշում տեղի է ունենալու Ղարաբաղի թեմական դպրոցի գոյութեան 75-ամեակի յօբելեանի տօնախմբութիւնը և փառաբանվելու է յիշատակը այն անձի, որ եղել է հիմնադիր և սկզբնապատճառ ազգային այդ կրթական հաստատութեան, այն է՝ Բաղդասար միտրօպոլիտ Հասան-Ջալալեանի յիշատակը:

Ռուսահայերի ազգային կեանքի պատմութեան մէջ այսօրվայ տօնախմբութիւնը մի գեղեցիկ և փառաւոր էջ պէտք է աւելացնէ, որովհետև մի դպրոցի 75-ամեայ գոյութիւնը ցոյց է տալիս, որ հայ ժողովրդի մէջ ընծային են քաղաքակրթական յատկութիւնները, ուսման և կրթութեան սէրը:

Ճիշդ է, Ղարաբաղի թեմական դպրոցը չէ կատարել ամբողջովին այն մեծ դերը, որ վիճակված է նրան, չէ կատարել այն միսիան, որ բաժին է ընկնում նրան: Բայց նա չէ կարողացել կատարել գլխաւորապէս միջոցների սղութեան և նիւթական անապահովութեան պատճառով: Եւ այն, ինչ նա կատարել է 75 տարվայ ընթացքում, վանելով խաւարը, տարածելով ժողովրդի մէջ մայրենի լեզուի, գրականութեան և հայրենի պատմութեան ուսումը, տալով գիւղերին ուսուցիչներ և դէթ միշնակարգ ուսումն ունեցող քահանաներ, դաստիարակելով բազմաթիւ սերունդներ, համակված ազգային-առաջադիմական գաղափարներով—բաւական է դարձեալ, որ այսօր Ղարաբաղի հայ ժողովուրդը իր երախտագիտութիւնը յայտնէ ցնծութեամբ և ոգեորութեամբ:

Եւ որովհետև Ղարաբաղի թեմական դպրոցը սահմանված է երկար տարիներ կրթական և դաստիարակչական մեծ դեր խաղալու այդ երկրի հայ ժողովրդի կեանքի մէջ, ուստի գիտակից և հայրենասէր ղարաբաղցիների, մանաւանդ ունեւոր դասակարգի վրա ծանրանում էր բարոյական վեհ պարտականութիւն՝ ապահովել նիւթապէս իրանց երկրի ազգային alma mater-ը, որպէսզի նա կարողանայ հաւասարաչափութեամբ կատարել իր ստանձնած միսիան:

Եւ այս անգամ, ի պատիւ ղարաբաղցիների, կարելի է ասել, որ նրանց ունեւորները չը թերացան իրանց ազգային պարտականութիւնների մէջ և իրանց առատ նուիրատուութիւններով կազմեցին մի խոշոր ֆօնդ, որի արդիւնքը, միացած դպրոցի միւս եկամուտների հետ, կարող է ապահովել դպրոցը:

Տարակոյս չը կայ, որ այսօր ի սփիւռս յանծաւալ Ռուսաստանի տարածված ղարաբաղցիները, որոնք զրկված են լինելու հեռաւորութիւնից մասնակցել անձամբ իրանց հայրենիքի կուլտուրական մեծ տօնին, հեռուից սրտով կը միանան իրանց հայրենակիցների ուրախութեանը և ցնծութեանը: Եւ ոչ միայնակ ղարաբաղցիները, այլ բոլոր գիտակից հայերը այսօր պէտք է հրճվեն, տեսնելով որ ազգային լուսաւորութեան մի օջախ այսօր դրվում է հաստատ հիմքերի վրա:

«Մշակը», որ շատ ուժեղ կապերով զոդված է եղել Ղարաբաղի թեմական դպրոցի հետ, թէ այն պատճառով, որ իր աշխատակիցների մի ստուար խումբ եղել է այդ դպրոցի աշակերտներ, ուսուցիչներ, նոյնիսկ տեսուչներ և հոգաբարձուներ, թէ այն պատճառով, որ նա երկար ու ձիգ տարիների ընթացքում բազմաթիւ յօդուածներ է նուիրել այդ դպրոցի բազմակողմանի քննութեան և կարիքներին, այսօր հրճուանքով ողջունում է Ղարաբաղի մայր-կրթարանի 75-ամեայ գոյութեան մեծ յօբելեանը և մաղթում է, որ նա դեռ երկար տարիներ բարգաւաճէ, առաջ ընթանայ ազգային-առաջադիմական ուղղութեամբ, տալով Ղարաբաղի հայ ժողովրդին պիտանի գործիչներ և գիտակից քաղաքացիներ:

Ողջո՜յն Ղարաբաղի թեմական դպրոցին, ողջո՜յն նրա այժմեան և կեանքի գործիչներին, յաւերժ յիշատակ և նրա հանգուցեալ գործիչներին և վաստակաւորներին:

Հ. Առաքելեան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ

Խնդացնոր Թիւրքիան Հայաստանին մէջ

Բիթլիս, 26 յուլիս

Թող զարմանալի չթուի, եթէ ասեմ, թէ այս տարուան ամառուան տաքերը Թիւրքիոյ վրայ ուղեղի և ջղերու խանգարում յառաջ բերած են: Մէկ կողմէն կը տեսնենք Թիւրքիան, որ կաշխատի ամեն խարեբայական հնարքներով եւրոպական գործոնութիւնն արգիլել Հայաստանին մէջ, միւսէն իր բանակներն Էրզրումէն մացնելով՝ վանայի մէջ կը նեռուի, զայրացնելով իրմէ արդէն ճանձրացած եւրոպական պետութիւնները և տեղի տալով որ փութացնեն իրենց ծրագրի գործադրութիւնն Ասիական Թիւրքիոյ բաժանման մասին: Նա հոս՝ Պոլսոյ մէջ՝ նախ եւրոպացիներն և ապա հայերը խաբելու համար անգլիացի բարեխոսներու հետ կը պայմանաւորուի, հոն՝ Բօղոսոյի մէջ հայերը կը ջարդէ, Հայաստանի ժանդարմէրիան եւրոպականացնելու կեղծ առաջադրութեամբ՝ Վան կօմիսիա կը ղրկէ, Բիթլիսի մէջ անունը գրել չգիտցող մէկը նոյն կազմին կօմանդան կը կարգէ, Մշոյ դաշտի հայ գիւղերէն մեծ փութկոտութեամբ ճամբայի տուրքեր կը հաւաքէ, Դիարբէքիրի մէջ 1000 ր. ամսականով արդէն վճարած ու ըՐած ֆրանսացի երկրաչափը՝ ոչ. Մայէրն երկու տարուընէ ի վեր անգործ կը թողու՝ անոր պէտք եղած ճամբու ատաղձը չտալով: Այս և ասոնց նման յայտնի տարօրինակութիւններն ևս, որ դէպ կը թելադրեն հաստատ մնալու իմ դիակնոստիկիս մէջ, նկատելու Թիւրքիան մի անձարձակ խելացնոր և խորհուրդ տալու պետութեանց, որ առանձնացնեն ու պարփակեն զայն պետութեանց յատուկ յիմարանոցին մէջ, եթէ կայ: Նա ոչ թէ կառավարելու, այլ կառավարուելու է, զայն զինելու տեղ զինաթափ ընելու է՝ եթէ կուզուի, որ քաղաքակրթութիւնն անարգել քալէ: Հայաստանի անցեալ ու ներկայ դրութիւնը, Մակեդոնիայի երէկուան վիճակը, Լիբանանու առջի առուր կացութիւնը փաստացիօրէն երեան կը բերեն թելադրութեանցս անսխալութիւնը:

Անոր քրօնիկ հիւանդութեան բուժման համար կարելիութիւն չկայ. զայն առողջացնելու համար 19-դ և 20-դ դարերուն մէջ դուրսէն եղած փորձերն անօգուտ մնացած են. ներքին յեղափոխութիւններով ու պատերազմներով անոր առաջարկուած դեղահատներն անկում և անմարսելի սեպուած են և աւելի անոր ջղերը գրգռելու ծառայած են՝ քան թէ սթափեցնելու:

Պարիզքի վերջին հրաժարականը, Բաթումի և այլ տեղերու բողոքի միտինգները՝ քաղաքներու և գիւղաքներու ազդեցութիւն առած բերած են Թիւրքահայաստանի կառավարութեանց վրայ, որոնք կը շարունակեն նորանոր նախճիրներ գործելու աւելի մեծ թափով մը, քան հերու ու անցեալ տարի: Տեսէք թէ ինչպէս:

Քիւրդերը Գիւզէլ-դէրէի կողմերն երեք նոր հայեր սպաններ են, Սղերդի շրջանի գիւղերուն մէջ արտասովոր թալաններ կընեն. արդէն Մշոյ Սասնոյ Շէնիք ու Սեմալ հայ գիւղերու կալուածները գրաւելու վրայ են տեղային կառավարութեան օժանդակութեամբ և հակառակ տեղւոյն առաջնորդ՝ Խարախանեանի բերանացի ու գրաւոր փաստացի բողոքներուն: Անոնք Դիարբէքիրի վիլայէթին մէջ կոտորածներ ընելու կը սպառնան, այնպէս որ Էրզրումի վերագրաւումէն ի վեր Դիարբէքիրէն Բիթլիս, Սեէրդկ, Ֆարզին, ասղիի և անդիի կողմերն երթեւեկութիւններն ու դաշտային աշխատութիւնները դադրեր են:

Դուրսերը քիւրդերու ըրածները շատ անհնար կը մնան կառավարութեան քաղաքներուն մէջ գործածներուն հանդէպ: Բիթլիսի կառավարութիւնն ամբողջ վիլայէթի ոստիկանական կազմին մէջ, որ 114 անձէ կը բաղկանայ, մնացած երկու հայերէն պետանին՝ Սամսոն էֆէնդին պաշտօնանկ ըրաւ, Բիթլիսի շրջանին 52,000 հայ բնակիչներուն զլացաւ նահանգային ժողովին (զեմստվօ) մէջ մէկ ներկայացուցիչ իսկ տալ: Կրթական կանոնէն Թիւրքիայի ամբողջ գաւառներէն ամենախեղճ և յետամնաց Բիթլիսի կրթական տեսչութեան փափուկ գործը նա յանձնեց Դուրանէ դուրս ուրիշ ոչ մի բան գիտցող տեղացի շէյխ Աբդիւլ-Բակը էֆէնդիին, զոր եթէ եւրոպացի մը տեսնէ, մարդէ աւելի revenant պիտի կարծէ: Նա առանց քաշուելու այժմ շրջուն և մնայուն կերպով Հայաստանի մէջ գտնուած եւրոպական մեծ պատուութեանց հիւպատոսներու ներկայութիւնէն, և գուցէ անոնց ցուցնելու համար, թէ հայերն օտարին հոգն ու ուշադրութիւնը գրաւելու համար զէրբաբ կը սպանեն, վերջին օրերուն եղած սպանութեանց համար հրահանգ տուաւ դատարաններուն որ բանտարկեն ու դատապարտեն հայերը, և այդպէս պատժական դատարանը փրխուսցի ուսուցչի սպանութեան գործն հայոց վերագրելով 4 հայեր բանտարկեց և իբր ոճրագործ 8—15 տարուան թիապարտութեան դատապարտեց Պարէտ և Խաչիկ անուն հայերը. մինչ իսկական ոճրագործը՝ ձեռքէ վիրաւոր քիւրդ Եասէնն՝ արձակ ու հանգիստ կը պտտի: Իրանց դատարանն ալ՝ հինգ տասի առաջ Սահակ [illegible] ազգ պետական պօստը կողոպտելով անպատիժ մնացած և փաշայութեան ատիճանին բարձրացած՝ Եուսուֆ-փաշային իրաւունք տուաւ գրաւելու Մոտկանի Մղուկ հայ գիւղը: Կուսակալի նախագահութեան ներքև գործող վարչական ժողովը կը նկրտի հիմա դարերէ ի վեր Աբլաթի կծուկ գիւղի կալուածներն հայերէն խլելով քաղաքիս կրօնապետներէն հարէթի շէյխին տալ, ինչպէս նախորդ տարին Մոտկանի Հաւուրեղի և ուրիշ հայ գիւղերու հողերն առնելով Կարի շէյխերուն տուաւ:

Ահա հոս իրականին մէջ յայտնի կըլլայ, թէ մէկ կողմէն թիթիհադական կառավարութիւնը սպանութիւններով, թալանելով, բանտարկութեամբ, հողէ ու ինչքէ զրկելով հայերը փչացնելու, և քիւրդին հակաթիւրքական շարժումներն արգիլելու համար՝ քիւրդ կրօնապետներուն ու երեւելիներուն հողային նուիրատուութիւններ կընէ, անդին նոյն կառավարութեան կնամն ու թիկունքը կազմող երիտասարդ-թիւրքերը, կը լսեմ թէ, փորձեր կընեն նորէն Հայաստանի մէջ դաշնակցականները խաբել, և զանոնք իրենց հետ առնելով դէմ ելլել եւրոպական միջամտութեան, խոստանալով Հայաստանի մէջ մացնել նախ ներքին ու փոխադարձ կօնտրոլի դրութիւն և ապա ապակերոնացում և այլն, և այլն:

Երիտ-Թիւրք կառավարութեան այդ երիտասարդ ընթացքն է, որ կը յիշեցնէ մարդուս աղուէսի և ագռաւի առակը: Ի՞նչպէս յուսալ և հաւատալ, թէ հայ կուսակցութիւն մը կամ անհատ մը պիտի վստահի իրենց խօսքերուն. իրենք՝ որ հիմա կը լեղեն իրենց 8 օր առաջ մեծ պետութեանց ներկայութեանը Բալկաններու հետ կնքած պրոտոկոլը. թողունք որ իրենք պէտք է գիտայնին, թէ Դաշնակցութիւնը Հայաստանի մէջ Թիւրքիոյ դէմ ելլելու և կուռելու համար շատ մը համախոհներ կունայ ունենալ, բայց թէ անոր հետ գործակցելու պարագային՝ մինակ կը մնայ: Ամբողջութեամբ ժահրով լեցուն և շրթունքը մեղրով պատած խելագար երիտասարդ-Թիւրքերէն այլևս միայն ազաներն են որ կը խաբուին, այլ ոչ հայերը:

Մեղի ֆեդերացիա ու աւտօնօմիա պէտք չեն, այլ Պղտոս-փաշայի ծրագրին գործադրութիւնը:

Մշեցի

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

8 օգոստոսի

Բէլգրադ.—Թագաւորը հրովարտակով վաւերացրեց Բուխարեստի դաշնագիրը:

Կ. Պոլիս.—Յունական պատգամաւոր Դրագումիսը, որ բանակցում էր Կ. Պոլսում Թիւրքիայի հետ դիպլոմատիական յարաբերութիւնները վերսկսելու մասին, մեկնեց Աթէնք: Բացի կիրակի և տօն օրերից

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Ամբողջութեամբ ժահրով լեցուն և շրթունքը մեղրով պատած խելագար երիտասարդ-Թիւրքերէն այլևս միայն ազաներն են որ կը խաբուին, այլ ոչ հայերը:

Մեղի ֆեդերացիա ու աւտօնօմիա պէտք չեն, այլ Պղտոս-փաշայի ծրագրին գործադրութիւնը:

Մշեցի

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակատրոշմ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. տուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏՏԻՆԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ —20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Պոստոյթով դուրս գնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարությունները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնայում՝ Большая 32, Ռիգայում՝ 8 Площадь Биржи.

1913 թվի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, օրինաւոր կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կիրը», 2) «Մշակի» քառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ջինայի, Կանտի, Նեվրոկոպի, Մելնիկի և Ստրումիցայի քաղաքների քաղ զօրքերը նոյն իսկ օգոստոսի 8-ից յետոյ կը հեռանան յիշեալ քաղաքներից ոչ այլ կերպով, բայց եթէ յանձնելով նրանց բուլգարական կանոնաւոր զօրքին համապատասխան արձանագրութիւն կազմելուց յետոյ»։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

8 օգոստոսի

Սեվաստոպոլ.—Բարձրագոյն Հիւրերի գալստեան առիթով քաղաքը ծովական տեսք է ընդունել։ Նաւահանգստում գեղեցիկ շարքերով կանգնել են սեւծովեան նաւատորմի նաւերը։ Ահագին հասարակութիւն է հաւաքված։

—

Պետերբուրգ.— Մինիստրների խորհուրդը Բագուի նաւթահանքերի զարգացումը և նաւթի գների թանգանալը ի նկատի առնելով, 87-դ յօդուածի կարգով թոյլատրել է, որպէս ժամանակաւոր միջոց, անմաքս ներմուծել արտասահմանեան նաւթ, մաքսահարկից ազատել 50 միլիոն պուդ արտասահմանեան քարածուխ արքունական երկաթուղիների համար և թոյլատրեց Վլադիկավկազեան երկաթուղուն առանց մաքս վճարելու գնել 10 միլիոն պուդ արտասահմանեան քարածուխ։

—

Բազու.—Վերսկսեցին աշխատանքները 20 ֆիրմաների 1597 բանուորները։ Գործադուլ արին 314 հոգի։

—

Հաւազա.—Հանդիսաւոր կերպով բացվեց խաղաղութեան քսաներորդ կոնգրէսը։ Մասնակցում են 950 հոգի։ Նախագահում է Դէլօուէրը։ Գերմանը, Բերգէզիուսը և Լաֆոնտէնը բողոքեցին բալկանեան անցքերի դէմ։

—

Հաւազա. — Խաղաղութեան կոնգրէսնցիոն հետևեալ բանաձևն է ընդունել. «Կոնգրէսը պահանջում է, որպէս զի սպառազինութիւնների վերջ տալու հարցը մտցվի օրակարգի մէջ խաղաղութեան երրորդ կոնֆերէնցիայի համար. կոնգրէսը բողոքում է այն անձանց վնասակար ազդեցութեան դէմ, որոնք շահագրգռված են զէնքի արդիւնաբերութեան մէջ. կոնգրէսը յանձնարարում է խաղաղութեան ընկերութիւններին քննութեան ենթարկել սպառազինութիւններին ատիճանաբար վերջ տալու ընդհանուր դաշնագրի նախագիծը, որպէսզի մերձաւոր կոնգրէսը գործէ յաւատենական կարողանայ ըստ բաղվել այդ հարցերով։

—

Հաւազա.—Խաղաղութեան կոնգրէսը, քննելով միջնորդ դատարանի դատավճիռը խաղաղ ճանապարհով իրագործելու ինդիրը, մերժեց հօլլանդական պրոֆեսոր Ֆանֆօլլենհօֆէնի նախագիծը՝ միջազգային ոստիկանութիւն կազմակերպելու մասին։ Վիէննայի բիւրոյին յանձնարարված է հաւաքել միջնորդ դատավճիռները իրագործելու ներկայումս գոյութիւն ունեցող խաղաղ միջոցները։

—

Պետերբուրգ. — Բալտիական նաւատորմի 47 նաւաստիներին, որոնք 52-ի գործի առիթով յուլիսի 20-ին դատապարտված էին կրօնշտատի զինուորական-ծովային դատարանի կողմից, օգոստոսի 5-ին Բարձրագոյն ներման են արժանացել։

—

Քիշինէվ.— Բեսսարաբիայում Դնէպրի և Պրուտի վարարելուց և կարկտահարութիւնից ոչնչացել են 38,600 դեսեատին տարածութեամբ ցանքսեր, պարտէզներ ու խաղողի այգիներ։ Վնասը 4 միլիոնից աւելի է։

—

Կիէվ.—Այրվեց երկաթուղային բատալիոնի աւտոմոբիլների պահեստը, ոչնչացան 10 աւտոմոբիլներ, 3-ը ազատվել են։ Վնասը հասնում է 100 հազար ռուբլու։

—

Բուլղարիա.—Օգաչու Շէկէլին ընկաւ 300 մէտր բարձրութիւնից և ծանր ջարդուածքներ ստացաւ։

—

Մադրիդ.—Լրագիրների տեղեկով, գեներալ Սիլվատրի գօրամասը գերի վերցրեց Բայսուլիի բանակի մի մասը։ Սպանացիների կորուստները խոշոր են։

—

Գենտ.—Ամբողջովին այրվեց միջազգային ցուցահանդիսի սպանական պաւիլիոնը։

—

Պօլա.—30½ սանտիմետրանոց թընդանօթից արձակելու փորձեր անելիս, փականի պայթումից սպանվեցին 3 և ծանր վիրաւորվեցին 2 հոգի, մի քանի հոգի էլ թեթև վէրքեր են ստացել։ Փոխ-ծովապետ կոմս Լանիուսը ծանր վէրքեր է ստացել երկու ոտքից։

ՀԵՌԱՒՈՐՅԱ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

8 օգոստոսի

Շանխայ.—Նանկինը վերցնելու լուրը չէ հաստատվում։ Ապստամբները յետ են մղել յարձակումը և իրանց դիրքը լաւացրել։ Քաղաքում տեղի են ունենում կողոպուտներ։ Հաղորդում են, որ գեներալ Զանսունը բոլորովին անծանօթ է ժամանակակից պատերազմների վարելուն։

—

Խարբին.—Ինժենէր Ֆրիդի Ֆիտօուխեցզիի անտառային կապալի գծի վրա խուլխուլները նոր յարձակում են գործել և այրել գոյքը։ Բանուորներին ծեծել են ու փախցրել։ 380 հոգուց բաղկացած նորեկ բանուորներին խուլխուլները ապառնացել են, որ աշխատանքները սկսելու դէպքում նրանց գնդակահարութեան կենթարկեն։ Կապալի աշխատանքները դադարեցված են։ Ծառայողները իրանց ընտանիքներին ուղարկում են Շիտօուխեցզի կայարանը։

—

Մաիմաչէն.—Ռուսուխտուն հրովարտակ հրատարակեց Հարաւային և Հիւսիսային Մոնգոլիայի միացման մասին։ Զինացիների դէմ գործող զօրավարներին հրամայված է պաշտպանել և խաղաղեցնել մոնգոլական նոր գրաւված երկիրները, չը յափշտակվելով օտար երկիրների նուաճումներով, պաշտպանել Մոնգոլիայում ապրող խաղաղ չինացիներին։ Հրամայված է նոյնպէս վերաշինել Ուրգա-Կալգան ուղին և բարեկամական յարաբերութիւններ հաստատել մանջուրների հետ։

—

Տօկիօ.—Ցիտանների, ներքին գործերի, երկրագործութեան և արդիւնաբերութեան մինիստրները ուղևորվեցին գաւառները ճառեր արտասանելու հասարակական կարծիքը ղեկավարող Սէիւկայի կուսակցութեան ազդեցութիւնը ուժեղացնելու նպատակով։

ԹԱՒՐԻԶԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՋԸ

(Մի կարևոր առաջարկ)

Կենտրոնականը իր հիմնարկութեան օրից ի վեր մամուլի մէջ իր մասին շատ է խօսել առել։ Եւ այդ խօսքը չի հասնում. այս ու այն առիթներով դա լսվում է նաև այս վերջերս առանձին զօրութեամբ և փաստերի կուտակմամբ։ Այդ բոլորը հրապարակապէս ցոյց են տալիս, որ կենտրոնականի ներսում կան շատ պակասաւոր և հիւանդոտ կողմեր, ուստի միջոցներ և վճռականութիւն են պէտք ուղղելու ու առողջացնելու մեր միակ դպրոցի ներքինը։ Նրանք, որոնք ի պաշտօնէ տէր ու զեկավար են կարգվել այդ հաստատութեան, պարտաւոր են ունկնդիր լինել մամուլի արդար կանչերին և առաջ բերել այնպիսի անհրաժեշտ փոփոխութիւններ, որոնք բուժէին նրա հիւանդ կողմերը։ Սակայն ներկայ տողերով մենք այդ ծանօթ ու վերաւոր խնդրով չէ որ ուզում ենք զբաղվել։ մենք մի անյետաձգելի և ժամանակակից հարց կուզէինք շօշափել, որ շատ ու շատ կողմերով օգտակար կը լինէր ընդհանուր Ատրպատականի հայերին, եթէ մեր արծարծածը իրականութիւն ստանար։

Թաւրիզում բողոքական և կաթոլիկ լաղարիստ միսիոներն ունեն դպրոցներ, ուր գիշերօթիկ հայ սաներ են պահվում։ Այդ սաների թւում կան բաւական գաւառացիներ, որոնք իրանց ուսումն աւարտելուց յետոյ գնում են գաւառները—իրանց ծնընդավայրերը—և առաջ տանում պրօպագանդան, որի համար Արևմուտքից մեզ մօտ շնորհ են բերել ոչ քրիստոնեաներին միայն աւետարանելու միսիա ունեցող մեր միսիային Մոնգոլիայի միացման մասին։ Զինացիների դէմ գործող զօրավարներին հրամայված է պաշտպանել և խաղաղեցնել մոնգոլական նոր գրաւված երկիրները, չը յափշտակվելով օտար երկիրների նուաճումներով, պաշտպանել Մոնգոլիայում ապրող խաղաղ չինացիներին։ Հրամայված է նոյնպէս վերաշինել Ուրգա-Կալգան ուղին և բարեկամական յարաբերութիւններ հաստատել մանջուրների հետ։

—

Տօկիօ.—Ցիտանների, ներքին գործերի, երկրագործութեան և արդիւնաբերութեան մինիստրները ուղևորվեցին գաւառները ճառեր արտասանելու հասարակական կարծիքը ղեկավարող Սէիւկայի կուսակցութեան ազդեցութիւնը ուժեղացնելու նպատակով։

ԹԱՒՐԻԶԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՋԸ

(Մի կարևոր առաջարկ)

Կենտրոնականը իր հիմնարկութեան օրից ի վեր մամուլի մէջ իր մասին շատ է խօսել առել։ Եւ այդ խօսքը չի հասնում. այս ու այն առիթներով դա լսվում է նաև այս վերջերս առանձին զօրութեամբ և փաստերի կուտակմամբ։ Այդ բոլորը հրապարակապէս ցոյց են տալիս, որ կենտրոնականի ներսում կան շատ պակասաւոր և հիւանդոտ կողմեր, ուստի միջոցներ և վճռականութիւն են պէտք ուղղելու ու առողջացնելու մեր միակ դպրոցի ներքինը։ Նրանք, որոնք ի պաշտօնէ տէր ու զեկավար են կարգվել այդ հաստատութեան, պարտաւոր են ունկնդիր լինել մամուլի արդար կանչերին և առաջ բերել այնպիսի անհրաժեշտ փոփոխութիւններ, որոնք բուժէին նրա հիւանդ կողմերը։ Սակայն ներկայ տողերով մենք այդ ծանօթ ու վերաւոր խնդրով չէ որ ուզում ենք զբաղվել։ մենք մի անյետաձգելի և ժամանակակից հարց կուզէինք շօշափել, որ շատ ու շատ կողմերով օգտակար կը լինէր ընդհանուր Ատրպատականի հայերին, եթէ մեր արծարծածը իրականութիւն ստանար։

Թաւրիզում բողոքական և կաթոլիկ լաղարիստ միսիոներն ունեն դպրոցներ, ուր գիշերօթիկ հայ սաներ են պահվում։ Այդ սաների թւում կան բաւական գաւառացիներ, որոնք իրանց ուսումն աւարտելուց յետոյ գնում են գաւառները—իրանց ծնընդավայրերը—և առաջ տանում պրօպագանդան, որի համար Արևմուտքից մեզ մօտ շնորհ են բերել ոչ քրիստոնեաներին միայն աւետարանելու միսիա ունեցող մեր միսիոնարները։ Դրա դէմը կարելի է առնել նման միջոցով։ Որքան գաւառացիներ կան, որոնք ուրախութեամբ կը կամենային գալ և ուսանել ազգային դպրոցներում, եթէ միայն գիշերելու տեղ ունենային դրանցից մէկն ու մէկում։ Այդ տեսակէտից ամենամեծ յարմարութիւնն ունի կենտրոնականը։ Նրա մեծ, գեղեցիկ, օդասուն պարտէզը, վերնայարկերի բազմաթիւ սենեակները կարծես շինվել են մի նախանձելի գիշերօթիկ դպրոց լինելու համար։ Կենտրոնականի ուսուցիչները ստանում են այնպիսի փառաւոր, անգամ Կովկասում շատ քիչ տրվող ռոճիկներ, որ այդքանով դրանք կարող են դպրոցից դուրս ապրել, ինչպէս ապրում են Արարատեան և Հայկազեան դպրոցների տեղական և թէ կովկասցի ուսուցիչները, որոնք համեմատաբար շատ անհնարին ռոճիկ են ստանում։ Մեր գաւառացիները գիշերօթիկ պահվելով կենտրօնականում և այնտեղ էլ աւարտելով իրանց ուսումը՝ կը դառնան գաւառ և տված ազգային ոգով՝ այդ ուղղութեամբ էլ կը լուսաւորեն իրանց խաւար հայրենակիցներին։

Ամերիկեան բողոքականները 40—50 թուականով պահում են գաւառից գիշերօթիկ սաներ. այդքան փողով մատակարարում են նրանց ուսում, լուացք, բաղնիք, թէյ, ուտելիք և այլն։ Նոյնքան գումարով (50—60 թուականով) կենտրօնականի մեր հոգաբարձուները ամենայն հեշտութեամբ կարող են առնուազը 40 աշակերտ պահել և ապա ճամբել գաւառները, ուր մենք կունենանք ժողովրդական գործիչների անձնուէր և եռանդուն մի բանակ, որին անպատիժ չեն կարող ընդհարվել Արևմուտքի մեր ֆանատիկ «աւետարանիչների» մարդասպան զզուելի փորձն ու ձգտումները։

Մեր առաջարկը խիստ կարևոր է և այժմէական և արժէ որ «Մշակն» էլ իր ձայնը բարձրացնէ այդ առիթով։ Թող հոգաբարձութիւնն ու առաջնորդարանն ևս լուրջ կերպով մտածեն այս առիթով և դիմեն գործնական քայլերի։

Ա. Տէր-Վարդանեան

Թաւրիզ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

X

Այսօր Ղարաբաղի հինաւուրց մայրաքաղաք Շուշին ատնում է իր միակ լուսաւոր ջահի, թեմական դպրոցի 75-ամեայ գոյութեան յօբելեանը։

Եօթանասուն և հինգ տարի, ամբողջ ¾ դար այդ հիմնարկութիւնը մի լուսաւոր փարոսի պէս իր անսպառ լոյսն է տարածել խաւարի մէջ կորած, լայնածաւալ Ղարաբաղի մի ծայրից միւսը։

Նրա բազմաթիւ շրջանաւարտները այսօր ցրված են աշխարհիս զանազան կողմերը, շատերը նրանցից թէ անցեալում և թէ ներկայումս հասարակական և գրական ասպարէզներում աչքի ընկնող տեղ են գրաւում։

Մեր երկիրը առ հասարակ շատ աղքատ է կրթական հիմնարկութիւններով, մանաւանդ հայկական միջնակարգ դպրոցներով, որոնք մեր եկ.-ծխական դպրոցների համար ազգագայ ուսուցչական կադրեր պիտի պատրաստեն։ Մանաւանդ աղքատ է այդ կողմից Ղարաբաղը, որի հայկական թեմի ամբողջ տարածութեան վրա միակ միջնակարգ դպրոցը Ղարաբաղի թեմականն է։

Եւ 75 տարվայ ընթացքում այդ դպրոցը նիւթական ամենասուղ միջոցների մէջ, միշտ ներքին կռիւներով ալեկոծված՝ այնուամենայնիւ կարողացել է միշտ բարձր ու կանգուն մնալ և հասնել իր պատկառելի հասակին։

Հայ հասարակութիւնը ընդհանրապէս և Ղարաբաղի ազգաբնակութիւնը մասնաւորապէս շատ բանով է պարտական Ղարաբաղի թեմ. դպրոցին, որի յօբելեանն է կատարվում այսօր։

Նա հայութեանը տուել է պատկառելի թւով պատրաստված ուսուցիչներ, տուել է մեր գրականութեան մէջ ներկայումս անուն ունեցող մի շարք գրականագէտներ, հասարակական գործիչներ և այլն։

Եւ չը նայած այդ բոլորին, նա ամբողջ 75 տարվայ ընթացքում մի խղճուկ, չափազանց խղճուկ կեանք է քարշ տուել միշտ նիւթական ամենասուղ միջոցների մէջ։

Ղարաբաղի հայութիւնը, որի մէջ չափազանց շատ հարուստներ կան, որի կրեսոսները յայտնի են ոչ միայն Ռուսաստանում, այլ և արտասահմանում, շատ քիչ է մտածել իր միակ լուսաւոր ջահի ապահովութեան համար և 75 երկար ու ձիգ տարիների ընթացքում նա համարեա թէ նիւթական ոչ մի խոշոր նուիրաբերութիւն չէ արել իր հայրենիքի միջնակարգ դպրոցին և չէ ապահովել նրան։

Դժբաղդաբար մեր հայկական իրականութեան մէջ այդ առաջին դէպքը չէ. հայը չէ սիրում երբէք ինքնաբերաբար որևէ նուէր անել և այն էլ կրթական որևէ հիմնարկութեան։

Հանգուցեալ անմահ հրապարակախօս Գրիգոր Արծրունին շատ ճիշդ էր նկատել, որ հայը տիրացու ազգ է։

Եւ դարերի ընթացքում՝ հայը միշտ այդ է ապացուցել. հայի սրբութիւն սրբոցը միշտ վանքերն ու եկեղեցիներն են եղել, որ նա ապահովել է հոկայական գումարներով ու կալուածքներով, որոնց համար փառաւոր շէնքեր է կառուցել, իսկ դպրոցի համար երբէք չէ մտածել։

Անցեալ, դիտեցէք մեր երկրի հնութիւններն ու աւերակները, և դուք կը տեսնէք փառաւոր, հոկայական գումարներ արժեցող շինութիւններ, որոնց միայն աւերակներն են մնացել այսօր, և բոլորը՝ եկեղեցիներ ու վանքեր՝ այս ու այն բարեգործի կառուցած՝ իրանց հոգու փրկութեան համար։ Հաշակաւոր Անիի 1001 եկեղեցիների աւերակների մէջ մինչև այսօր էլ դեռ մի դպրոցի, մի կրթական հիմնարկութեան աւերակ չէ գտնվել։

Եւ դարերի օրինակը շարունակվում է մինչև այսօր։ Հայ բարեգործը ամենից առաջ իր գումարները ուղղում է դէպի վանքերն ու եկեղեցիները։

Մի Տաթև, մի Գանձասար առանց որևէ կարիք ունենալու հոկայական հողեր, անտառներ ունեն իրանց տրամադրութեան տակ, իսկ նոյն երկրի թեմական դպրոցը ողորմութեամբ է ապրում և դեռ երկար ժամանակ կապրէր ողորմութեամբ, եթէ Զաւէն ու Բարգէն վարպետների անուշ ձանքերի և գերմարդային աշխատանքի շնորհիւ հնարաւորութիւն չը լինէր նրա ապահովութեան ֆոնդի համար ողորմութեամբ մի որոշ գումար հաւաքելու։

Եւ տակաւին Ղարաբաղի թեմական դպրոցը իր 75-ամեայ գոյութեամբ ու գործունէութեամբ արժանի էր աւելի լուրջ ուշադրութեան թէ հայ հասարակութեան և թէ ղարաբաղցիների կողմից։

Այսօր, Ղարաբաղի մայրաքաղաքում, տօնվում է թեմական դպրոցի 75-ամեայ գոյութեան յօբելեանը, և թող այսօրվայ տօնը հիշք ծառայէ դպրոցի ապագայ բարօրութիւնը, դպրոցի, որը մեծ գործ է կատարել Ղարաբաղի համար և դեռ ապագայում էլ պէտք է կատարի։

Վաղարշակ Թումանեան

Բագու

ՕՂՋՈՒՅՑ...

(Ղարաբաղի թեմ. հոգ. դպրոցի 75-ամեայ յօբելեանի առիթով)

Այսօր իւրաքանչիւր ղարաբաղցու սրտին նուիրական մի վեհապանծ և գեղադոյն տօն է կատարվում. Ղարաբաղի թեմական հոգ. դպրոցի 75-ամեայ յօբելեանն է այդ։

Ղարաբաղի սիրտ Շուշի քաղաքում 75 տարի առաջ երջանկայիշատակ Բաղդասար

ՌԱՆՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐԻԶԻՑ

«Փառայեղ անգործունէութեան» թէզը.—Աւստրօ-իտալական տեսակէտները.—Խաղաղութեան դաշինքի վերջաբանութեան հարցը։

Պարիզ, 8 օգոստ. (Ն. տ.)

Լէնդօնի խորհրդաժողովը, Եգէյեան ծովի կղզիների հարցը, Բուխարէստի խորհրդաժողովը—ահա քաղաքական այն հարցերը, որոնց շուրջը ներկայումս դառնում է Ֆրանսիական հասարակական կարծիքի և մամուլի ուշադրութիւնը։

Անցեալ թղթակցութեամբս «Մշակի» ընթերցողներին հաղորդել էի այն տեսակէտները ու կարծիքները, որ մամուլը արտայայտել էր բալկանեան այս երկրորդ պատերազմի մասին։ Այդ ժամանակից ի վեր տեղի ունեցող անցքերը—Բուլգարիայի վերջնական պարտութիւնը, Ադրիանուպօլսի գրաւումը Թուրքական բանակի կողմից, Բուխարէստի խորհրդաժողովը, և այլն,—Ֆրանսիական հասարակական կարծիքի վրա ոչ մի ազդեցութիւն չը գործեցին ի նպաստ Բուլգարիայի։ Ընդհակառակը, նոյնիսկ այն մի քանի թերթեր, որոնք պատերազմի պատասխանատուութիւնը մասնաւորապէս ծանրացնում էին Ռուսաստանի և Սերբիայի վրա, այժմ իրանց համակրութիւնը յայտնում են այդ պետութիւններին, բացառելով միայն Բուլգարիային, որը իբրև նախայարձակ, պարտաւոր է պարտութեան բոլոր հետևանքները կրելու։ Այդ կողմից պատմութիւնը, անշուշտ, բացառութիւն չէը կարող ստեղծել։ Voc victis, ասում է լատինական ասածը։

Առաջնորդվելով Ֆրանսիական կառավարութեան «անշահախնդրութեան» և «ոչ միջամտութեան» բանաձևից, մամուլը յարգում է միւս պետութիւններին բարեացակամ չէզոքութիւն պահպանել և թողնել, որ պատերազմող կողմերը իրանք հիմնեն բալկանեան հաւասարակշռութիւնը։ «Temps»-ը առանձնապէս շեշտում է այդ միտքը, վերլուծելով Բիսմարկի յայտնի խօսքը արևելեան հարցի նկատմամբ—«փառայեղ անգործունէութիւն» (Magistraleinaction)։ Նրա կարծիքով, պետութիւնների հաւաքական կամ անհատական միջամտութիւնը առիթ պիտի ընծայէ միայն նոր թարգութիւններ ստեղծելու, ինչպէս որ փորձը ցոյց է տուել մինչև այժմ։ Այդ տեսակէտից նա յիշում է Լէնդօնի խորհրդաժողովի խաղացած դերը բալկանեան առաջին պատերազմի ժամանակ։ Եթէ աւտրօ-իտալական միջամտութեան շնորհիւ չը ստեղծվէր մի անկախ Ալբանիա, որ ցեղագրական ու աշխարհագրական լուրջ հիմունքներից զուրկ է, ներկայ պատերազմը չը պիտի ծագէր երէկվայ դաշնակիցների մէջն, որոնց հողային ցանկութիւններն ու պահանջները լի ու լի գոհացում պիտի ստանային բովանդակ Եւրոպական Թիւրքիայի հաշւեյարդարութեամբ։

Բացի դրանից, «Temps»-ը մէջէ ելելում և մի այլ տեսակէտ։ Բալկանեան պետութիւնները ազատագրվել են Եւրոպայի խնամակալութիւնից։ Նրանք իրանց յանդուգն գործողութիւններով քաղաքական չափահասութիւն են ձեռք բերել, ուստի արտաքին որևէ միջամտութիւն պիտի արգելէ ապահով ու տևական մի խաղաղութեան հաստատմանը։

Հէնց այդ նկատումներից զեկավարվելով է, որ մամուլի միւս օրգանները ևս ներկայումս յարձակվում են Աւստրիայի և Իտալիայի վրա, որոնք, ինչպէս յայտնի է, դիւանագիտական ամէն ազդեցութիւն գործ դրին՝ յոյն-սերբիական պահանջները նուազեցնելու համար։

Մի քանի թերթեր նոյնիսկ աւտրօ-իտալական միջամտութեանն են վերագրում բուլգարօ-ռումինական համաձայնութիւնը և այժմեանից նախագուշակում են բալկանեան քաղաքական երկու խմբակցութիւններ, որ երբեակ համաձայնութեան և երբեակ նիւակակցութեան շուրջը մի տեսակ արբանեակներ (satellites) պիտի կազմեն։ Այդ երկու խմբակցութիւնները պիտի լինեն մի կողմից Բուլգարիան, Ռումինիան և Ալբանիան և միւս կողմից՝ Սերբիան, Ցունաստանը և Զերմօգորիան։

Ֆրանսիական «փառայեղ անգործունէութեան» այդ թէզը խիստ քննադատութեան է ենթարկվում աւտրիական և իտալական մամուլի մէջ, որոնք առարկում են, թէ իրանց պետութիւնները անմիջական շահեր ունեն Բալկաններում և թէ Սերբիայի և Ցունաստանի գերակշռութիւնը վտանգում է իրանց ռազմագիտական դիրքը։

Աւստրիան երբէք չէ ցանկանում, որ հզօր, մեծացած մի Սերբիա ստեղծվի իր սահմանների մօտ, որովհետև Բօսնիա-Հէրցեգովինայի սերբերը ամէն գնով պիտի աշխատեն միանալ իրանց մայր հայրենիքի հետ։ Բացի անջատական շարժման այդ վախից, կայ և մի այլ պատճառ, որ Աւստրիային մղում է հակասերբիական քաղաքականութեան։ Դա քաղաքական նոր Ալբանիան է։ Ամենքին յայտնի է, որ Աւստրիան և Իտալիան ալբանական մի նոր իշխանութիւն ստեղծելով՝ նպատակ ունեն ապագայում իրանց մէջ բաժանել այն։ Քաղաքականապէս ուժեղ ու անտեսապէս անկախ մի Սերբիա կարող է այդ հեռաւոր ծրագիրը ի դերև հանել։

Իտալիան իր կողմից, համանման շահերով է առաջնորդվում, երբ հակառակում է Ցունաստանի ընդարձակմանը։ Նա չէ ցանկանում, որ Ցունաստանը Արևելեան Միջերկրականի մէջ յայտնի ոյժ ներկայացնի։ Դրա համար է, որ նա գժտութիւններ է յարուցանում՝ Թիւրքիայից գրաւած կղզիները վերադարձնելու։

Վերջերս կղզիների խնդիրն էլ առանձին բանակռիւ է հայթայթել Ֆրանսիական և իտալական մամուլին։ Ֆրանսիական բոլոր թերթերը, անխտիր, այն միտքն են պաշտպանում, որ Եգէյեան ծովի բոլոր կղզիները, նոյնիսկ Իտալիայի գրաւածները, պէտք է յանձնել Ցունաստանին։ Սոյն թէզը հիմնված է ըստ հեղինակին ցեղագրական նկատումների վրա։ Արդարև, կղզիների բոլոր բնակիչները յոյներ են։ Բայց քաղաքական նկատումները աւելի մեծ տեղ են գրաւում այդ գնահատութեան մէջ և այդ իրողութիւնը չէ ծածկվում արդէն Ցունաստանը՝ կղզիների և նուաճած ծովափերի միացումով՝ ծովային մեծ ոյժ է դառնալու, որ ապագայում երբեակ համաձայնութեան համար մի զօրաւոր նեցուկ կարող է հանդիսանալ։

Իտալական «Tribua» և «Corriere della Serra» թերթերը բաւական չեն համարում Լէնդօնի խորհրդաժողովի զիջումները Ալբանիայի հարաւային սահմանագծի նկատմամբ։ Եթէ կօրչիցա քաղաքը Ցունաստանից առնվելով կցվեց Ալբանիային, դա՝ նրանց կարծիքով՝ հաւասար փոխարժէք չէ ներկայացնում կղզիների վերադարձման համար։ Նրանք նկատում են նոյնպէս, որ այդ հարցը դուրս է Լէնդօնի խորհրդաժողովի իրաւասութիւնից, քանի որ նա կարգադրված է Լօզանի իտալօ-Թիւրքական դաշնագրութեամբ։ Բայց այդ դաշնագրութեան, Իտալիան կղզիները պահում է որպէս մի գրաւական։

Երբ Թիւրքիան Տրիպօլսից դուրս հանել իր բանակը, այն ժամանակ միայն Իտալիան պարտաւորվում է վերադարձնել նրան գրաւած կղզիները։ Մօտաւորապէս մի տարվայ փորձը ցոյց տուեց, որ Թիւրքիան ոչ միայն չէ կանչում տրիպօլեան իր բանակը, այլև գաղտնապէս քաջալերում է բնիկների դիմադրութիւնը։

Հետևաբար, մատնում են իտալական յիշեալ թերթերը, Իտալիան կատարելապէս իրաւունք ունի նոյնիսկ մշտապէս պահելու կղզիները, որոնցից մի քանիսը, ինչպէս են Սամաքուլիան, Բոդոսը, և այլն, ռազմագիտական աքանչելի դիրքեր են։

Ֆրանսիական և աւստրօ-իտալական այս տեսակէտների տարբերութիւնը աւելի ցայտուն կերպով արտայայտվեց Բուխարէստի խորհրդաժողովի ժամանակ։ Կամարայի հարցը, ինչպէս յայտնի է, ամենաուրջ կէտն էր, որ երկար վիճաբանութեան նիւթ մատակարարեց խորհրդաժողովի անդամներին։ Եւ զարմանալին թերևս այն է, որ, առաջին անգամը վինելով, ռուսական թէզը նոյն եղաւ, ինչ որ աւտրօ-իտալականը։

Աւստրիան և Իտալիան ընդդիմացան յոյն-սերբական պահանջներին և չը ցանկացան, որ Սերբիան վերադարձնէ իրան Սարամիցա, Բաղմիցա և Կօչանա քաղաքները և Ցունաստանն էլ տերազատէ Կամարային։ Նրանք աշխատեցին, որ Բուլգարիան տարացած դուրս չը գայ Բուխարէստի խորհրդաժողովից, որովհետև Բուլգարիան առ այժմ Բալկաններում մեկ պետութիւնն է, որի վրա յենվելով՝ իրանք աւելի դիւրութեամբ պիտի կարողանան կռուել Ցունաստանի և Սերբիայի նուաճողական ձգտումների դէմ։

Ռուսաստանը յարեց այդ թէզին բոլորովին տարբեր նկատումներով։ Բուլգարիան պատմականօրէն իր գոյութիւնը պարտական է նրան. բացի դրանից, Սան-Ստեֆանոյի դաշնագրով նա Կամարան շնորհել էր Բուլգարիային։

Ֆրանսիան, ընդհակառակը, միշտ նկատի ունենալով որ Սերբիան և Ցունաստանը աւելի սերտ շահերով կապված են իրան, ցանկացաւ, որ նրանց պահանջները կատարեալ գոհացում ստանան։ Յուլիսի 30-ին,

Ֆ ա ր ա ծ ա ն

Ս. Գ. Ս. Ս. Ս

Типография канцелярии Императорского Ведомства на Кавказѣ Издательство Главного Управления Закавказскаго края

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌԱՋԻՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ԳՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՇՈՒՐՋ

(Ս. Գանձարանական հրապարակ № 7.)

Գ. Ս. ԱՆՍԽԱԼԵԱՆ ԱՅՍՕՐՎԱ ԳՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆՈՒՄ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԿԱՆԻ ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

◆ Գրքերի ստացման համար դիմել հասցեներս։

ԿՈՒՐԱՅԻՆ ԿԱՐ ՊԱՏՈՒՀԱՆ Ի ՀԱՅԿԱՆԻ

Հայոց Ցեղասպանության հարյուրամյակի տարեդարձի կապակցությամբ

ՀԱՅՈՒՄ Ի ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ

Ամենայն տեսակի գրքեր, ինչպես նաև գրենական պարագաներ

ՀԱՅԿԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ